COUNTY OF LOS ANGELES
**Public Health**

# Ծանուցում

Հունվարի 1, 2026

Լոս Անջելեսի Շրջանի՝ «Անդամների համար վարքային առողջության ձեռնարկը» թարմացվել է: Այն ուժի մեջ է 2026 թվականի փետրվարի 1-ից և հասանելի է տարբեր լեզուներով. «Թմրանյութերի չարաշահման կանխարգելում և վերահսկում» ծրագրի՝ հիվանդների համար աղբյուրների և տեղեկատվության կայքէջ՝ https://publichealth.lacounty.gov/sapc/PatientPublic

Տպված օրինակն անվճար ստանալու համար խնդրում ենք դիմել ձեր մատակարարի միջոցով, և այն ձեզ կտրվի հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում:

Անդամի համար ձեռնարկում թարմացումները ներառում են «Լրացուցիչ տեղեկություններ ձեր շրջանի մասին», «Բառեր, որոնք պետք է իմանալ», «Ծանուցում գաղտնիության պահպանմանը վերաբերող գործողությունների մասին» բաժինները, ինչպես նաև տեղեկություններ ծառայությունների նոր տեսակների (եթե դրանք կիրառվում են) մասին, որոնցից են հետևյալը և այլ ծառայություններ.

- Ծնող-երեխա փոխհարաբերությունների թերապիա (PCIT)
- Առողջ և արդյունավետ գործող ընտանիքի թերապիա (FFT)
- Բազմահամակարգային թերապիա (MST)
- Հետևողական խնամք համայնքում (ACT)
- Հետևողական խնամք համայնքում՝ դատաիրավական խնդիրներ ունեցողների համար (FACT)
- Համակարգված մասնագիտացված (CSC) խնամք փսիխոզի

առաջին դեպքից հետո
- «Խմբակ-տների» ծառայություններ (Clubhouse Services)
- Համայնքային առողջապահության աշխատողների ընդլայնված ծառայություններ
- Օժանդակության վրա հիմնված աշխատանք (Supported Employment)
- Առողջապահության ավանդական գործողություններ
- «Հասանելի» ծառայություններ (In-Reach Services)

Եթե ձեզ անհրաժեշտ է ձեր լեզվով օգնություն, ձեր հաշմանդամությանն առնչվող օժանդակող միջոցներ կամ ծառայություններ, ինչպես նաև բրայլյան գրերով կամ խոշոր տառերով տպված փաստաթղթեր, դրանք հասանելի են, և կարող եք պահանջել՝ զանգահարելով 1-800-854-7771 (TTY: 711): Այս ծառայություններն անվճար են: